ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2020թ. № 165

ԱՅԳԵՍՏԱՆ ԹԱՂԱՄԱՍ, ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ԽԱՆՈՒԹՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ, 10-րդ, 13-րդ կետի «ա» ենթակետով, 14-րդ կետով, 16-րդ կետի «ա» ենթակետով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ Նվարդ Միհրդատի Գասպարյանը ինքնակամ ձևափոխել է 06-006-0243-0004 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,07099 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա առկա 41,44 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը և կառուցել է 681,54 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տուն, 41,98 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով աստիճանահարթակ և 134,17 քառակուսի մետր մակերեսով խանութ, որոնց պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 10042014-06-0036 վկայականը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի 23.06.2020 թվականի թիվ ԲՏՄ/09.2.3/7077-20 գրությունը և Նվարդ Միհրդատի Գասպարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Նվարդ Միհրդատի Գասպարյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Այգեստան թաղամաս, թիվ 9 հասցեում գտնվող 06-006-0243-0004

կադաստրային ծածկագրով 0,07099 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 681,54 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը, 41,98 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով աստիճանահարթակը և 134,17 քառակուսի մետր մակերեսով խանութը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Նվարդ Միհրդատի Գասպարյանի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

4. Նվարդ Միհրդատի Գասպարյանին.

1) համայնքի բյուջե վճարել 975 050 ՀՀ դրամ օրինականացման վճար, որից 714 780 ՀՀ դրամ՝ բնակելի տան, իսկ 260 270 ՀՀ դրամ՝ խանութի համար:

2) Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5.Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2020թ. № 166

ՄԱՅԻՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՍՑԵՆ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԹԻՎ 2387-Ն ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «դ» ենթակետով, 53-րդ կետի «գ» ենթակետով և 55-րդ կետով, հաշվի առնելով, որ Մայիս Արտաշի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքին տրամադրվել է «ք.Սպիտակ, Մուրացան փողոց» հասցեն, սակայն անշարժ գույքը գտնվում է Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցում, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1151932 վկայականը և Մայիս Արտաշի Մկրտչյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Մայիս Արտաշի Մկրտչյանին սեփականության իրավունքով պատկանող Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 06006 453-5 կադաստրային ծածկագրով 0,075 հեկտար մակերեսով տնամերձ հողամասի և դրա վրա գտնվող 06006 453-5-1 կադաստրային ծածկագրով 36,0 քառակուսի մետր մակերեսով ավտոտնակի «ք.Սպիտակ, Մուրացանի փողոց» հասցեն փոփոխել «քաղաք Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, թիվ 13» հասցեով:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հասցեի փոփոխությունը ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«26» հունիսի 2020թ. № 167

ԴԱՎԻԹ ՍԱՄՎԵԼԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 17-րդ կետով և 18-րդ կետի «բ» ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշումով, հաշվի առնելով, որ Դավիթ Պետրոսյանին սեփականության իրավունքով պատկանող Տեր-Սիմոնյան փողոց, թիվ 152 հասցեում գտնվող 06-006-0444-0009 կադաստրային ծածկագրով, 0,082 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2019 թվականին ինքնակամ կառուցված 56,13 քառակուսի մետր մակերեսով խանութի և 8,08 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, դրանք կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված եզրակացությունը և Դավիթ Սամվելի Պետրոսյանի դիմումը՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոց, թիվ 152 հասցեում գտնվող 06-006-0444-0009 կադաստրային ծածկագրով, 0,082 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական

նշանակության հողամասի վրա 2019 թվականին ինքնակամ կառուցված 56,13 քառակուսի մետր մակերեսով խանութը և 8,08 քառակուսի մետր մակերեսով աստիճանահարթակը ճանաչել օրինական:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Դավիթ Սամվելի Պետրոսյանի սեփականության իրավունքը:

3. Դավիթ Սամվելի Պետրոսյանին՝

1)համայնքի բյուջե վճարել 110 450 ՀՀ դրամ օրինականացման վճար,

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարման դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

5. Սույն որոշմամբ ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6.Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. նոյեմբեր 26
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունվար 2020թ. № 169

ՇԱՀՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին պարբերությամբ, 4-րդ մասի 1-ին պարբերությամբ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգի» 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 3-րդ կետով, նույն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 33-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով, 48-րդ կետով, հաշվի առնելով, որ Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0505-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից 0,00601 հեկտար մակերեսով այլ գործառնական նշանակության հողամասի վրա 2019 թվականին կառուցված 6,45 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, հիմք ընդունելով

«Տեխպրոյեկտ» ՍՊԸ-ի եզրակացությունը, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի սեփականության հանդիսացող Սպիտակ համայնքի Շահումյան փողոցի վրա գտնվող 06-006-0505-0012 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասերից 0,00601 հեկտար մակերեսով այլ գործառնական նշանակության հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության և դրա վրա գտնվող ինքնակամ կառուցված 6,45 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տունը ճանաչել օրինական՝ համաձայն հատակագծի:

2.Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքի նկատմամբ ճանաչել Սպիտակ համայնքի սեփականության իրավունքը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 50/1» հասցեն:

4.Սույն որոշումը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ սահմանված կարգով պետական գրանցում կատարելու համար:

5. Իրավունքի պետական գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել կառույցն իրականացրած Աշոտ Հրաչիկի Սիմոնյանի (ծնված 12.06.1973թ.) օրինականացված կառույցը և դրա պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ հողամասը սահմանված կարգով և գներով սեփականության իրավունքով կամ վարձակալությամբ ձեռք բերելու համար:

6. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 29

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«29» նոյեմբեր 2020թ. № 170

ԱՇՈՏ ՀՐԱՉԻԿԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ պարբերությամբ, 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման» կարգի 10-րդ և 13-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի թիվ 470-Ն որոշումով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «բ» ենթակետով, հաշվի առնելով, որ Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Շահումյան փողոց, թիվ 50 և Շահումյան փողոց, թիվ 234 հասցեներում գտնվող 0,05239 հեկտար ընդհանուր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա 2019 թվականին ինքնակամ կառուցված 318,17 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան, 3,18 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբի և 2,57 քառակուսի մետր մակերեսով պարսպի պահպանումը չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հիմք ընդունելով անշարժ գույքի գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման գրանցման թիվ 05112013-06-0003 և 27122013-06-0060 վկայականները, «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը, «Տեխպրոյեկտ» ՍՊԸ եզրակացությունը և Աշոտ Հրաչիկի Սիմոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Միավորել Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին սեփականության իրավունքով պատկանող Շահումյան փողոց, թիվ 50 հասցեում գտնվող 06-006-0505-0005 կադաստրային ծածկագրով 0,0354 հեկտար և Շահումյան փողոց, թիվ 234 հասցեում գտնվող 06-006-0505-0007 կադաստրային ծածկագրով 0,01698 հեկտար մակերեսներով բնակելի կառուցապատման հողամասերը՝ համաձայն հատակագծի:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով միավորված 0,05239 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի ճշգրտված հատակագիծը:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված 0,05239 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 318,17 քառակուսի մետր մակերեսով բնակելի տունը, 3,18 քառակուսի մետր մակերեսով բաց պատշգամբը և 2,57 քառակուսի մետր մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:

4. Սույն որոշման 3-րդ կետում նշված բնակելի տան նկատմամբ ճանաչել Աշոտ Հրաչիկի Սիմոնյանի սեփականության իրավունքը:

5. Սույն որոշման 3-րդ կետում նշված անշարժ գույքին տրամադրել «ք.Սպիտակ, Շահումյան փողոց, թիվ 50» հասցեն:

6. Սույն որոշմամբ ծագող իրավունքը և տրամադրված հասցեն ենթակա են պետական գրանցման:

7. Աշոտ Հրաչիկի Սիմոնյանին.

1) համայնքի բյուջե վճարել 314 519 ՀՀ դրամ օրինականացման վճար,

2) ընդունել ի գիտություն, որ սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը՝ 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

8. Քարտուղարության բաժնին՝ սույն որոշման մեկ օրինակը 5-օրյա ժամկետում տրամադրել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե:

9. Սույն որոշման կատարման կազմակերպումը և հսկողությունը դնել աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի վրա:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 29
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«29» դեկտեմբեր 2020թ. № 191

ՎԻԿՏՈՐ ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 2097842 վկայականը և Վիկտոր Գարսևանի Թորոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Վիկտոր Գարսևանի Թորոսյանին սեփականության իրավունքով պատկանող՝ Սպիտակ համայնքի Քըրք-Քըքորյան փողոցի վրա գտնվող 06006 282-53 կադաստրային ծածկագրով 0,083 հեկտար մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Քըրք-Քըքորյան փողոց, թիվ 11» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. դեկտեմբեր 29
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունիսի 2020թ. № 192

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱԳԻԿ ՂՈՐՈՒԽՉՅԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով, համաձայն «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի, Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 12-րդ ենթակետի «դ» պարբերության, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գագիկ Ղորուխչյանի 2020 թվականի հունիսի 26-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Գագիկ Ղորուխչյանին (ՀՎՀՀ 66000065) տալ «ք. Սպիտակ, Շահումյան 73 Ա» հասցեում գտնվող շինության ճակատային մասում 6,4քմ չափերով արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն՝ համաձայն էսքիզի, 2020 թվականի համար՝ ըստ ամիսների:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 29
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«29» հունիսի 2020թ. № 143

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԵՐԺԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂՈՒԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, համաձայն Սպիտակ համայնքի ավագանու 2019 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 57-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 5-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Սերժիկ Հովակիմյանի 2020 թվականի հունիսի 29-ի հայտը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Սերժիկ Հովակիմյանին (ՀՎՀՀ 66002095) տալ «ք. Սպիտակ Ալեք Մանուկյան» փողոցի վրա գտնվող կրպակում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն՝ մինչև 2020 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ տրամադրել թույլտվությունը հավաստող սահմանված ձևի փաստաթուղթ:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. հունիսի 29
ք. Սպիտակ